ՊԵՂՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԵՂԱԿՈԹՈՒՄ

ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ

Զանգեզուրի նախնադարյան մշակույթի բացակա օղակները և «զանգեզուրյան»[1] օջախի ընդգրկած սահմանները պարզելու նպատակով Ախսիանի շրջանում 1976 թ. կատարված պեղումները գոհացուցիչ արդյունքներ տվեցին։ Հատկապես արդյունավետ էին Անգեղակոթ գյուղից մոտ 1 կմ արևմուտք գտնվող գամբարանաթմբերի պեղումները, որոնց ընթացքում հայտնաբերված նյութերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է «զանգեզուրյան» մշակույթի փուլային զարգացմանը հետևելուն։

Պեղված բոլոր ութ դամբարաններն էլ քարարկղային էին, ունեին վերգետնյա կառուցվածք և ծածկված էին միջին ու խոշոր չափի քարերից պատրաստված լիցքով (դրանց տրամագիծը տատանվում էր 8—12 մ, իսկ բարձրությունը՝ 0,8—1,60 մ միջև)։ Դամբարանախցերի (երկարությունը՝ 2—4,60 մ, լայնությունը՝ 1,30—1,80 մ, խորությունը՝ 0,6—1,30 մ) դիրքորոշումը արևելքից-արևմուտք էր։ Դրանց արևմտյան պատերը, բացառությամբ №№ 1, 3 և 4-ի, որոնք ունեին սեղանաձև հատակագիծ, աղեղնաձև էին շարված։

Հայտնաբերված նյութերի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով դրանք ներկայացնում ենք ըստ դամբարանային համալիրների։

Դամբարան № 1 (չափերը՝ 4×1,30×0,60 մ)։ Ննջեցյալի կմախքը և նյութերը փշրվել էին փլված ծածկասալերի և լիցքի քարերի ծանրության տակ։ Լավ էին պահպանվել երկու բրոնզյա օղեր (տախտ. I_8 ձևի), փոքրիկ շղթայիկը (տախտ. I_8), սարդիոնից ու երկնագույն շաղախից պատրաստված ուլունքներ (տախտ. $I_{15, 16}$) և բրոնզյա թիթեղաթերթից շրջանաձև մի կախիկ (տախտ. I_{26})։ Հավանաբար նույն ձևն է ունեցել նաև կախիկներից երկրորդը, որից միայն երկու բեկոր հայտնաբերվեց (տախտ. I_{29})։ Պեղածոների մյուս խումբը խեցեղեն արտադրանք էր։ Այստեղ առկա էին կճուճներ, գավաթներ, թասեր և քրեղաններ։ Կճուճները կարմիր և գորշ, անփայլ անոթներ են, որոնց գնդաձև իրանները մի դեպքում ավարտվում են կտրուկ դուրս թեքված (տախտ. II_{31}), մյուսում՝ փոքր շրթով վերջացող ուղիղ վզով (տախտ. II_{30})։ Անոթների իրանները զարդարված են վորագրման եղանակով արված ալիքաձև և դրոշմմամբ կատարված կարճ ակոսագծերով։ Գնդաձև իրան ունեն նաև գավաթներից երեքը, որոնցից երկուսն ավարտվում են դուրս ճկված շուրթ ունեցող ցածր վզով (տախտ. $II_{9, 10}$), իսկ մեկը՝ վերին մասում զարդարված լինելով կանելյուրներով, ուղիղ վիզ ունի։ Գավաթներից վերջինի

---

1 Զանգեզուրը զարգանալով հարավ-անդրկովկասյան մշակույթի շրջանակներում՝ սկսած մ. թ. ա. XI—X դդ. դրսևորել է տեղական առանձնահատկություններ. տե՛ս А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 147—151. *Օ. Ս. Խնկիկյան, Հետախուզական պեղումներ Ղափանի շրջանում («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 234—240)։*

ՏԱԽՏԱԿ I

իրանը նռնաձև է և աչքի է ընկնում առանձին մասերի շեշտված անցումներով (տախտ. II_{16})։ Սրանք, ինչպես և կճուճները, պատրաստված են դուրգի վրա և ունեն խամրած կամ թեթևակի փայլեցված դարչնագույն, սև կամ գորշ երանգ։ Նույն եղանակով են պատրաստված և քրեղան-թասերը։ Վերջիններս մի դեպքում ուղիղ վզով, մյուսում՝ թեթևակի դուրս թեքված փոքրիկ շրթով

(տախտ. II_{37}) անոթների բեկորներ են, որոնց գույները գավաթների գույների կրկնությունն են։

Դամբարան № 2 (չափերը՝ 2×1,30×0,80 մ)։ Այստեղ կատարված էր խմբակային թաղում։ Կմախքներից երեքը հյուսիսային պատի մոտ էին՝ ղլուխները գեպի հյուսիս, ղեմքերը արևմուտք, իսկ մեկը հարավային կողմում էր և գեմքն ուղղված էր հարավ-արևմուտք։ Բոլորն էլ պառկեցված էին կողքի,

ՏԱԽՏԱԿ II

ծալած վերջույթներով։ Նյութերի տեղադրության մեջ որևէ օրինաչափություն չէր նկատվում. դրանք ցրված էին ողջ դամբարանխցով։ Այստեղ հետաքրքրական էր սև պեմզաքարից պատրաստված, հարթ տապարիկ հիշեցնող իր ձուլելու համար նախատեսված կաղապարի բեկորը (տախտ. I_1), որը և ենթադրել է տալիս, թե դամբարանում թաղված են մետաղագործի ընտանիքի անդամներ։ Ինչ վերաբերում է մետաղյա իրերին, ապա դրանք ներկայացված էին կտրվածքում կլոր (տախտ. I_{32}), քառանիստ (տախտ. I_{30}) և վեցանիստ (տախտ. I_{81}) բրոնզյա ապարանջաններով, որոնցից մեկի մակերեսն ատամնավոր էր։ Բրոնզյա մյուս իրերից էին կտրվածքում կլոր և շեղանկյան տեսք ունեցող օղերը (տախտ. $I_{8,\ 12}$) ու ձվաձև եզրագծով, հարթ թիթեղից պատրաստված կախիկի բեկորը։ Վերջինիս կենտրոնում դրոշմման եղանակով արված է կիսագնդաձև ելուստաղարդ, որից ճառագայթաձև հեռանում

են նույն եղանակով արված երեք թերթիկներ (տախտ. I_{24})։ Մետաղյա իրերից վերջինը երկաթյա մատանին էր (տախտ. I_7)։

№ 2 դամբարանի զարդերի մյուս խումբը բրոնզից, սարդիոնից ու շաղախից պատրաստված ուլունքներն են (տախտ. I_{17})։ Վերջիններիս շարքում հետաքրքիր էր ճերմակ շաղախից պատրաստված, ձկան գլուխ հիշեցնող ուլունքը (տախտ. I_{21})։

Տեսակների բազմազանությամբ և հարստությամբ աչքի էր ընկնում այս դամբարանի խեցեղեն արտադրանքը։ Հայտնաբերված միականթ թասերի մակերեսները թեթևակի փայլեցված, սև, գորշ և դարչնագույն են, իսկ մեկի իրանի ստորին մասը զարդարված է փայլեցման եղանակով արված ուղղահայաց գծերով։ Անոթներն ունեն երկկոն իրան, որոնցից մեկի վերին մասը զարդարված է հորիզոնական ակոսներով (տախտ. II_{25}), իսկ մյուսինը՝ ծալքավոր (տախտ. II_{26})։ Խեցանոթների հաջորդ խումբը միականթ գավաթներն են։ Սրանցից մեկն ունի գնդաձև (տախտ. II_{12}), մյուսը՝ շեշտված անցումով երկկոն իրան, որն ավարտվում է կտրուկ դուրս թեքվող վզիկով (տախտ. II_{13})։ Վերը նշված անոթներից առաջինի մոտ հայտնաբերվեց սև, թեթևակի փայլեցված, ալիքաձև մակերեսով փոքրիկ կափարիչ (տախտ. II_{11})։ Ի տարբերություն սրանց, ձեռքի կոպիտ աշխատանքի արդյունք է ուղիղ վզով, նոնաձև իրանով, գորշ, անփայլ գավաթիկի բեկորը (տախտ. II_{18})։ Փոքրածավալ անոթներից վերջինը (որի կանթը կոտրված է) ունի բարձր վզով և թեթևակի դուրս ճկված շուրթով ավարտվող տանձաձև իրան, որը զարդարված է զույգզույգ խմբավորված ուղիղ ակոսագծերով (II_3)։ Մյուս խեցատեսակները ներկայացված են մեկական օրինակով։ Դրանց շարքում առկա են գորշ, թեթևակի փայլեցված, եռոտանի թասի մի մաս (տախտ. II_{41}), գնդաձև իրանով, ալիքաձև զարդանախշերով միականթ սափորի կես (տախտ. II_2), մրածածկ խոհանոցային կճուճի (տախտ. II_{44}), ռելիեֆ զարդագոտիներով քառականթ քրեղանի բեկորներ ու երկու անոթի մասեր։ Թասի երկկոն իրանի վերին մասը զարդարված է ալիքաձև երուստագոտիներով, իսկ կանթի երկու կողմերում փորագրված են դեմ-դիմաց կանգնած կենդանիների ոճավորված պատկերներ (տախտ. II_{47})։ Ինչ վերաբերում է մյուս կավանոթի բեկորին, ապա այն ունեցել է ծորակավոր քրեղանի տեսք (տախտ. II_{40})։

Վերոհիշյալ նյութերից բացի, այստեղից գտնվեցին գետաքարից պատրաստված, երկու ծայրերը կոտրված մի սանդակոթ (տախտ. I_4) և մեկ եզրը թեթևակի հարդարված վանակատի բեկոր (տախտ. I_2)։

Դամբարան № 3 (չափերը՝ 2,80×1,90×0,70 մ)։ Դամբարանախուցը ամբողջովին լցված էր քարերով, որոնք և փշրել էին նրա պարունակությունը։ Անվնաս էին մնացել ձեռքով պատրաստված աղյուսագույն մի գավաթ (տախտ. II_{29}), բրոնզյա երկու ապարանջան (տախտ. I_{33}) ու մեկ փոքրիկ մատանի (տախտ. I_9)։ Մյուս բեկորներից, որոնք չհաջողվեց վերականգնել, առանձնացվեցին շագանակագույն, սև և գորշ գույնի անփայլ քրեղանների երեք բեկոր։ Դրանցից երկուսի վերին մասերը զարդարված էին ռելիեֆ զարդագոտիներով (տախտ. II_{33}), իսկ մեկինը ավարտվում էր թեթևակի դուրս թեքված շուրթով (տախտ. II_{37})։ Ինչ վերաբերում է կմախքին, ապա այն, դատելով փշրված ոսկորների դիրքից, պառկեցված է եղել հարավային պատի մոտ, գլուխը դեպի հարավ։ Ելնելով ապարանջանների և մատանու փոքր չափերից, ենթադրում ենք, որ ննջեցյալը դեռահաս է եղել։

Դամբարան № 4 (չափերը՝ 3×1,20×0,90 մ)։ Այստեղ կմախքը պառկեցված էր դամբարանախցի կենտրոնում, գլուխը դեպի հարավ։ Նրա մոտ հայտնաբերվեցին երկու բրոնզյա մատանի (տախտ. $I_{8, 9}$) և հարդարված եզրերով երկու վանակատն գործիք (տախտ. I_{2})։ Նյութերի մյուս խումբը բաղկացած էր տարատեսակ խեցանոթներից։ Դամբարանում միականթ թասեր երկուսն էին. մեկն ավարտվում է բարձր, թեթևակի ներս թեքվող եզրակողով (տախտ. II_{28}), իսկ մյուսի մոտ այն ներճկված է և վերջանում է կլորացող շուրթով (տախտ. II_{38})։ Զևով սրանց կրկնությունն է թեթևակի դուրս թեքվող շուրթով բրեղանը (տախտ. II_{37})։ Անոթների մյուս խումբը կազմում էին գնդաձև իրան և դուրս փռված շուրթ ունեցող կճուճների մասերը, որոնց ուսերը զարդարված են փորագիր ալիքավոր և հատիկաշար զարդերով (տախտ. II_{44} ձևի)։ Ալիքաձև զարդ է փորագրված նաև ձգված իրանով սափորի վրա, որի ուսային մասը զարդարված է խորակոս գծազարդերով, իսկ ալիքաձև գծերի միջև գտնվող տարածությունը՝ ճառագայթաձև տարածվող կետերով (տախտ. II_{8})։ Անոթներից վերջինը գորշ դույնի, վերին մասը թեթևակի նեղացած և ապա լայնացած, նուրբ շրթով բաժակ է (տախտ. II_{7})։

Դամբարան № 5 (չափերը՝ 3×1,50×1,10 մ)։ Թաղումն անհատական էր։ Կմախքի վերջույթները ծալված էին։ Նրա մոտից հայտնաբերվեցին բրոնզյա մատանի (տախտ. I_{8}), երկու փոքրիկ օղեր, բրոնզյա փոքրիկ մի շղթայիկ (տախտ. I_{6}) և խաչաձև դրոշմազարդ ունեցող բրոնզյա կախիկի բեկոր (տախտ. I_{25})։ Պերճանքի մյուս առարկաները պտտագլանաձև, տակառաձև և գնդաձև սարդիոնից ու շաղախից պատրաստված ուլունքներ են (տախտ. I_{18})։

Համեմատաբար հարուստ էր այս դամբարանից հայտնաբերված խեցեղենը։ Կան գնդաձև (տախտ. $II_{12, 21}$) ու երկկոն իրանով (տախտ. $II_{14, 15}$) միականթ ու անկանթ գավաթիկներ, միականթ կանելյուրազարդ սափորներ (տախտ. $II_{3, 4}$), ալիքաձև զարդով կճուճ (տախտ. II_{45}) և քրեղաններ (տախտ. $II_{33, 36}$), որոնցից մեկը ներսից ցանցկեն, իսկ դրսից ուղղահայաց գծերով արված փայլանախշով է (տախտ. II_{35})։ Անոթների այս շարքում նորություն էր լայնացող կողերով միականթ չանն ու ձգված իրանով, բարձր վզով և ուսային մասում հատիկաշար զարդով խորը գավաթը (տախտ. II_{39})։

Դամբարան № 6 (չափերը՝ 3,40×1,40×1 մ)։ Այս դամբարանում թաղումը խմբակային էր։ Կմախքներից երկուսը հյուսիսային պատի մոտն էին՝ գլուխները դեպի արևելք, իսկ մեկը՝ արևելյան կողմում, գլուխը դեպի հարավ։ Դամբարանախցի արևմտյան կողմում հայտնաբերվեցին եղջերուի բրոնզյա փոքրիկ արձանիկ (տախտ. I_{13}), կենտրոնում և եզրերում կիսագնդաձև գրոշմազարդերով բրոնզյա շրջանաձև կախիկ (տախտ. I_{27}) և բրոնզյա մատանի (տախտ. I_{8} ձևի)։

Փոքր խումբ են կազմում ապակուց (տախտ. $I_{19բ}$), սարդիոնից (տախտ. $I_{19ա}$) և շաղախից պատրաստված տակառաձև, գլանաձև, տափակ և ձվաձև ուլունքները (տախտ. I_{19})։ Այստեղի խեցեղենի տեսակները նման են նախորդ դամբարանի նմուշներին։ Դրանցից են բաժակը (տախտ. II_{7} ձևի), նոնաձև, գնդաձև ու երկկոն իրանով միականթ ու անկանթ գավաթները (տախտ. $II_{17, 20, 22, 24}$), հատիկազարդ, մրոտված մակերեսով խոհանոցային կճուճը (տախտ. II_{44}) և ուղիղ եզրակողերով դարչնագույն թասի բեկորը (տախտ. II_{84})։ Նորություն է պաշտամունքային անոթի ստորին մասի կլոր և կամա-

րաձև անցքերով բեկորը։ Անցքերի միջև եղած տարածությունը զարդարված է խաչաձև, հորիզոնական ու ուղղահայաց փայլագծերով, իսկ անոթի վերին մասում փորագրված են հորիզոնական ակոսագծեր (տախտ. II$_{48}$)։

Դամբարան № 7 *(չափերը՝ 4,60×1,80×1,30 մ)։ Դամբարանաթմբի քարալիցքը հեռացնելու ժամանակ հայտնաբերվեց սանդի մի բեկոր (տախտ. I$_5$)։ Պեղումների ընթացքում պարզվեց, որ այստեղ էլ թաղումը խմբակային է եղել։ Կմախքներից մեկը դամբարանի կենտրոնում էր, երկուսը՝ հյուսիսային պատի մոտ, իսկ չորրորդը՝ հարավ-արևմտյան անկյունում։ Բոլորն էլ պառկեցված էին կողքի, ծալած վերջույթներով։ Դրանց շրջակայքում հայտնաբերվեցին կապույտ և երկնագույն շաղախից պատրաստված տարատեսակ ուլունքներ (տախտ. I$_{20}$), բրոնզյա երեք մատանի (տախտ. I$_{8,\ 9}$) և մի փոքրիկ զարդավահանիկ (տախտ. I$_{28}$)։ Հետաքրքրական են եռանկյունաձև անցքերով (գրանցից երեքը խուլ են, իսկ 26-ը միջանցիկ) բրոնզյա գլանաձև, անամեջ իրը (տախտ. I$_{22}$) և կտրվածքում կլոր տեսք ունեցող, բրոնզյա լարից կախիկը (տախտ. I$_{14}$), որն իր տեսակի մեջ, մեղ հայտնի տվյալներով, եզակի է։ Հայտնաբերված վերջին զարդը վերին և ստորին մասերում երեքական ելուստներով բրոնզյա փոքրիկ կախիկ է (տախտ. I$_{23}$)։ Այս նյութերից զատ, գտնվեցին նաև վանակատի երկու անմշակ բեկոր, գորշ քարից պատրաստված փոքրիկ գուրզ, որն, ամենայն հավանականությամբ, իշխանության խորհրդանիշ է հանդիսացել (տախտ. I$_{11}$) և տափակ պոչուկին բրոնզյա դամ դուրգամված երկաթյա փոքրիկ մի նետասայր (տախտ. I$_{10}$)։*

Բազմաքանակությամբ և տարատեսակությամբ էր աչքի ընկնում այստեղի խեցեղենը։ Կային ինչպես առօրյա գործածության, այնպես էլ պաշտամունքային նշանակություն ունեցող սափորներ, գավաթներ, սրվակ, բաժակ, կճուճներ, քրեղաններ և տեփուններ։ Սափորներն երկուսն են։ Դրանցից մեկն իրանի գնդաձևությամբ և ալիքաձև ռելիեֆ զարդագոտիներով նման է վերը նշվածներին (տախտ. II$_1$), իսկ մյուսի գնդաձև իրանն ավարտվում է կտրուկ դուրս թեքվող շուրթ ունեցող, թեթևակի նեղացող, բարձր վզով։ Վերջինս զարդարված է փայլեցմամբ արված ուղղահայաց գծազարդերով։ Անոթի աղեղնաձև կանթի պահպանված մասը շուրթի հետ միացման տեղում պարուրաձև ելուստազարդ ունի (տախտ. II$_5$)։ Ձևերով, գույներով և զարդամոտիվներով նախորդ դամբարաններից հայտնաբերվածների կրկնությունն են երեք միականթ գավաթները (տախտ. II$_{12,\ 24}$)։ Չորրորդն առանձնանում է իրանի փոքր-ինչ շեշտված անցումներով և վզի ձևով (ուղիղ)։ Անոթի ուսերը զարդարված են ալիքաձև ու հատիկաշար զարդով (տախտ. II$_{19}$)։ Նույն ձևն ունեն նաև երկու փոքրիկ այլ անոթներ, որոնց հատակների կենտրոնում անցքեր են արված։ Դրանցից մեկի իրանի ստորին մասը զարդարված է փայլեցմամբ արված ուղղահայաց գծերով (տախտ. II$_{23}$), իսկ մեկ այլ փոքրածավալ սրվակի ձգված իրանն ավարտվում է թեթևակի լայնացող բարձր վզիկով (տախտ. II$_{32}$)։ Պատրաստման նրբությամբ առանձնանում է կամարաձև, խոշոր կանթով թասիկի կեսը, որի բարձր, ուղիղ եզրակողը ավարտվում է թեթևակի դուրս ճկված շուրթով (տախտ. II$_{27}$)։ Ինչ վերաբերում է կճուճներին (տախտ. II$_{44,\ 46}$), քրեղաններին (տախտ. II$_{33,\ 42}$) ու բաժակին (տախտ. II$_7$), ապա դրանք նախորդ դամբարանից հայտնաբերվածների կրկնությունն են։ Իր ձևով քրեղանից չի տարբերվում ներսից ու դրսից լոսած, շագանակագույն

տեփուրի սիականթ բեկորը, որի վերին մասում կան ռելիեֆ ծալքագոտիներ (տախտ. II43)։

Դամբարանից հայտնաբերված վերջին իրը պաշտամունքային նշանակություն ունեցող անոթն է, որը, ցավոք, թերի է։ Բեկորների վերակազմությունից պարզվեց, որ այն եղել է եռոտանի, խողովակաձև իրանով, շրջանաձև անոթ, որի վերին մասում նկատվում է փոքրիկ կանթիկով ինչ-որ լրացուցիչ հարմարանք։ Անոթի իրանը զարդարված է ալիքաձև զարդագոտիներով (տախտ. II49)։

Դամբարան № 8։ Սա ձևով ամենևին չէր տարբերվում նախորդներից և, չնայած դամբարանախցի պատկառելի չափերին (3,30×1,50×0,70 մ), հուշադամբարան էր։ Այդ է վկայում կմախքի բացակայությունը։ Նկատենք, որ դամբարանի ծածկասալերը մեծ դժվարությամբ հնարավոր եղավ հեռացնել, որը և բացառում է դամբարանի կողոպտված լինելու հանգամանքը։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին բրոնզյա փոքրիկ մատանի (տախտ. I9), կապույտ շաղախից ուլունք, գնդաձև իրանով աղյուսագույն գավաթի (տախտ. I20) և դուրս թեքվող շուրթով քրեղանի (տախտ. II42) անզարդ բեկորներ։

Այսպիսով, նկարագրված բոլոր դամբարանների խեցեղենի մի մասը առաջին հերթին հիշեցնում է Զանգեզուր—Ղարաբաղի (Լծեն, Տոլորս, Լոր, Տանձավեր, Շիկահող, Առաջաձոր, Սրխավենդ, Մեհմանա և այլն) և Հայաստանի ու հարևան հանրապետությունների մ. թ. ա. XI—IX դդ. թվագրվող հուշարձաններից հայտնաբերված համանման իրերը։ Սակայն քննվող ողջ նյութը հնարավորություն է տալիս դրանք դասելու մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբով թվագրվող հուշարձանների շարքը։ Հանդիսանալով նախորդ դարաշրջաններում ձեռք բերված նվաճումների անմիջական ժառանգորդները, վերջիններս, բնականաբար, կրում են դարերի խորքից եկող կատարելագործումների և տեղական ձևերի առանձնահատկությունների կնիքը։ Դրա ապացույցներից մեկը եղջերուի արձանիկն է, որն իր ուշ բրոնզեդարյան նմանակներից տարբերվում է մանրամասների բացակայությամբ, ձևի պարզեցվածությամբ, սահունությամբ և չափերի փոքրությամբ։ Այս արձանիկից ոչնչով չի տարբերվում Վաղուդի գյուղից 1962 թ. պատահականորեն գտնված նույն շրջանի նմուշը[2]։

Ժամանակագրական առումով նույն շրջանին են պատկանում նաև բրոնզյա ղարդակախիկները, որոնց զուգահեռները առկա են Բեդկին-լագերի մ. թ. ա. X դ. վերջով և IX դ. թվագրվող նյութերում։ Վերջիններիս շարքում կան նաև ատամնավոր ապարանջաններ ու պարուրագալար օղեր[3], որոնք ամենևին չեն տարբերվում անգեղակոթյան նմուշներից։ Նույն նմանությունն է նկատվում նաև № 2 դամբարանից հայտնաբերված դրոշմազարդ կախիկի և Ոսկեվազում գտնված համանման զարդի (մ. թ. ա. X—IX դդ.) համեմատական ուսումնասիրությամբ[4]։

Բ. Կուֆտինը ուրարտական ժամանակաշրջանին է վերագրում Ցինցկարոյի դամբարանադաշտից հայտնաբերված «դոմինոյաձև» ուլունքները, որոնք գտնվել են Անգեղակոթում պեղված տակառաձև ուլունքներից ամենևին չտար-

---

[2] ՀՍՍՀ պետական պատմական թանգարան, գույք № 2308։

[3] А. А. Маргиросян. Նշվ. աշխ., էջ 193—200։

[4] Т. С. Хачатрян, Из истории изучения древнейших памятников склонов горы Арагац («Հայագիտական հետազոտություններ», հ. Ա, Երևան, 1974)։

բերվող օրինակների հետ[5]։ Հետագա պեղումների և ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին, որ նմանօրինակ զարդատեսակները բնորոշ են մ. թ. ա. X—VI դդ. հուշարձաններին (Բեդկին-լագեր, Խրթանոց, Լենինական, Արթիկ, Նորադուզ և այլն), հետևաբար, դրանք կայուն թվագրել հնարավոր չէ[6]։ Իրոք, չնայած անգեղակոթյան նյութերի մի մասն իր զուգահեռներն ունի մ. թ. ա. XI—IX դդ. հուշարձաններում, բայց դրանց գերակշռող մեծամասնությունը բնորոշ է մ. թ. ա. IX դ. վերջին և VIII դ.։ Այդ զուգահեռներից հատկապես կարևոր են Արարատյան դաշտի հուշարձանները, որոնք, անմիջապես նախորդելով ուրարտական արշավանքներին, թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ. և ստույգ թվագրվող նյութեր են։ Այս առումով կարևոր են Կարմիր բլուրի նախաուրարտական ժամանակաշրջանի բնակավայրից և նրա դամբարանադաշտից հայտնաբերված նյութերը։ Այստեղ № 1 դամբարանից հայտնաբերվել են կտրվածքում կլոր տեսք ունեցող բրոնզյա ապարանջաններ, երկկոնաձև իրանի վերին մասում ծալքագոտիներով զարդարված գավաթ և այլն, որոնք բնակավայրի 2-րդ շրջանի՝ մ. թ. ա. IX—VIII դդ. նյութերի պատճեններն են։ Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև № 4 և № 5 դամբարաններից հայտնաբերվածները, որոնց մեջ կան փորագիր և փայլեցման եղանակով արված ալիքաձև զարդերով ծորակավոր, միականթ անոթներ[7]։

Մ. թ. ա. X—VIII դդ. են թվագրվում նաև Մեծամորի հրդեհված շերտից ու տաճարներից հայտնաբերված նյութերը, որոնց նմանությունը անգեղակոթյան նմուշների հետ ակնհայտ է։ Դրանց շարքում առանձնանում են կանելյուրազարդ, խորաքանդակ գոտիները, ալիքների, զիգզագների և հատիկների տարբեր զուգորդություններով զարդարված կճուճներն ու թաղարները, ինչպես և ձգված իրանով բաժակները, չանների ու եռամաս իրանով անոթների բեկորները։ Անգեղակոթյան նյութերի հետ հաջող են կապվում նաև Մեծամորի դամբարանադաշտից՝ 1963 և 1965 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերվածները, որոնք «գլխամասում կամարաձև կառուցվածք» ունեցող դամբարանների պարունակություն են[8]։ Տարբերությունն այստեղ Անգեղակոթի դամբարանների վերերկրային կառուցվածքումն է միայն (այդպիսին էր նաև Տանձավեր գյուղում պեղված դամբարանների կառուցվածքը)։

Անդրադառնալով Մեծամորի դամբարանադաշտից հայտնաբերված նյութերին, նկատենք, որ ի թիվս այլ նյութերի, № 1 դամբարանից հայտնաբերվել են միականթ գավաթ, կճուճ և եռամաս իրանով կավաման, որը ոչնչով չի տարբերվում հատակին անցք ունեցող անգեղակոթյան օրինակներից։ Համանման խեցեղեն հայտնաբերվել է նաև № 6 և № 8 դամբարաններից։

Անգեղակոթյան նյութերի զուգահեռների մյուս խումբն են կազմում Կարմիր բերդի դամբարանադաշտի, ժամանակագրական առումով 2-րդ շրջանի (մ. թ. ա. IX—VIII դդ.), դամբարանների նյութերը։ Վերջիններիս մեջ առկա

---

[5] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, стр. 54, рис. 51, табл. XXII, стр. 279.

[6] А. А. Мартиросян, *նշվ. աշխ., էջ 196—211*, Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1976, стр. 242—243, рис. 155.

[7] А. А. Мартиросян, Город Теишебаини, Ереван, 1961, стр. 57—59, рис. 26 а,в.

[8] Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, նկ. 62, 65, 74, 76, 118, ազ. 10, 11, 16, նկ. 5, 7, 8։

են ոչ միայն հատիկաշար ու ալիքաձև զարդանախշով կնուճներ, սիականթ չաներ, իրանի վերին մասում ալիքաձև դոտեզարդերով և խոր ակոսաղծերով զարդարված քրեզաններ, սիականթ գավաթներ, բաժակներ, այլև ատամնավոր մակերեսով, կտրվածքում կլոր ու քառանիստ սարատեսակ ապարանջաններ, որոնք լայն տարածում են ունեցել մ. թ. ա. 1-ին հազարամյակից սկսած[9]։ Այստեղից հայտնաբերված ծորակավոր կաս «թելնիկաձև» անոթի (դամբարան № 55) նմանությունը անգեղակոթյան նմուշի հետ անառարկելի է[10], նման անոթ «սերձսևանյան» դաշտյնատեսակի հետ հայտնաբերվել է ԱՍՍՀ Սեիդ-քենդ գյուղի մի քարարկղից[11], իսկ Կաբալայիից՝ երկաթեղարյան նյութերի հետ գտնված երկկոն իրանով սիականթ դավաթը վերը թվարկվածների կրկնությունն է[12]։

Կարելի է բերված զուգահեռներն ավելացնել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան տարածքի բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված, մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբին պատկանող հասանսան նյութերով, սակայն եղածներն էլ բավական են Անգեղակոթի նյութերը մ. թ. ա. IX դ. վերջով և VIII դ. թվագրելու համար։ Միաժամանակ այդ զուգահեռների ընդհանրությունը կասկած չի հարուցում, որ Զանգեզուրը մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբում շարունակում էր զարդանալ «Հարավանդրկովկասյան» սիասնական ուշակության շրջանակներում։

РАСКОПКИ В АНГЕХАКОТЕ

ОНИК ХНКИКЯН

Резюме

Во время разведочных раскопок в Сисианском районе (1976 г.), западнее села Ангехакот, на расстоянии 1 км от него было обнаружено восемь курганов. Погребальные камеры курганов представляли собой обыкновенные «каменные ящики» с каменной насыпью. Диаметр курганов 8—12 м, при высоте 0,8—1,60 м. Погребальные камеры, имеющие наземное устройство, ориентированы с запада на восток и имеют следующие размеры: длина от 2—4,60 м, ширина 1,30—1,80 м, глубина 0,6—1,30 м.

В погребениях №№ 1, 3, 5 были одиночные захоронения, а в №№ 2, 6, 7—коллективные. Погребение № 8 оказалось кенотафом. Обнаруженный материал—бронзовые украшения, скульптура оленя, железный наконечник стрелы, перстень, а также разнообразные керамические изделия, имеющие в основном тускло-черную поверхность, датируемые концом IX—VIII вв. до н. э. Анализ материала указывает на общность культуры северо-восточных районов Армянского нагорья.

---

9 Ս. Ա. Եսայան, Հայաստանի պատմական թանգարանի բրոնզե ապարանջանները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 86, աղ. 3)։ С. А. Есаян, Ереван (Археологический очерк), Ереван, 1969, стр. 36—39, 49—50, табл. 24—26, 34.

10 Ս. Ա. Եսայան, Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, հ. 3, Երևան, 1972, աղ. 10, նկ. 6։

11 «Отчеты археологической комиссии за 1900 г.», вып. X, СПб., 1902, рис. 224.

12 С. М. Казиев, О древних погребальных обрядах на территории Кабалы («Материальная культура Азербайджана», т. VI, Баку, 1965, стр. 246—247, табл. II, рис. 8).